

ԱՂՕԹՔ ՀԱՅԻԹԻԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՐԵՐՈՒՆ ՀԱՍԱՐ
ԵՒ ՆՈՒԻՐԱՀԱՒԱՔ Ի ՆՊԱՍՏ ՏՈՒԺՈՒԱԾՆԵՐՈՒՆ

Առաջնորդ Սրբազան Հօր որոշումով, Կիրակի, Յունուար 17ին Թեմիս եկեղեցիներուն մէջ յատուկ աղօթք կատարուեցաւ Հայիթիի երկրաշարժի հետեւանքով զոհուածներու համար եւ նուիրահաւաք ի նպաստ երկրաշարժէն տուժուածներուն:

Սրբազան Հայրը Հոգեւոր Հովիւներուն դրկած իր կոչին մէջ կ'ըսէր. «Անկասկած, ահաւոր այս երկրաշարժի հետեւանքով համայն աշխարհը ազդուած է եւ մենք եւս որպէս քրիստոնեայ եւ Հայց. եկեղեցւոյ զաւակներ, մարդասիրական մեր օգնութիւնը պէտք է ցուցաբերենք կարիքաւորներուն: *Միշտ յիշենք, թէ 1988 թուին Հայաստանի երկրաշարժէն ետք մեծ թիւով երկիրներ եւ բարեսիրական կազմակերպութիւններ օգնութեան ձեռք երկարեցին մեր Հայրենիքին: Այժմ հերթը մերն է նիւթապէս մասնակցելու եւ ցոյց տալու քրիստոնէական մեր ոգին եւ գուրգուրանքը»:*

Այս առթիւ եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ նուիրահաւաք, որոնք Առաջնորդարան կը դրկուին: Սրբազան Հայրը հաւաքուած ընդհանուր զումարը պիտի յանձնէ Ամերիկեան Կարմիր Խաչի ներկայացուցչին՝ որպէս մարդասիրական օգնութիւն Թեմիս կողմէ:

Անոնք որոնք կը փափաքին նիւթական օգնութիւն կատարել, թող հաճին իրենց չէքերը գրել WESTERN DIOCESE-ARMENIAN CHURCH (In memo:Haiti) անունով եւ դրկեն Առաջնորդարան հետեւեալ հասցեով.

WESTERN DIOCESE- ARMENIAN CHURCH
3325 N. GLENOAKS BLVD.
BURBANK, CA 91504